*«Վավերացնում եմ»*
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
*19 ապրիլի 1999 թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ապրիլի 1999 թվականի N 236
քաղ. Երևան

## «ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՏՎՈՎՃԱՐՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4 հոդվածի չորրորդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Հայրենական մեծ պատերազմի վետերանների պատվովճարների նշանակման և վճարման կարգը (կցվում է):

2. Հայրենական մեծ պատերազմի վետերանների ամենամսյա պատվովճարի գումարը վճարվում է «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով այդ նպատակի համար նախատեսված միջոցների հաշվին:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ** **Ա. Դարբինյան**

*Հաստատված է*
*ՀՀ կառավարության 1999 թվականի*
*ապրիլի 19-ի N 236 որոշմամբ*

# Կ Ա Ր Գ

## ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՊԱՏՎՈՎՃԱՐՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ

1. «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ ամենամսյա պատվովճարը նշանակվում և վճարվում է Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին (բացի նշված մասնակիցներին հավասարեցված անձանցից):

2. Անկախ հաշվառման պահից պատվովճարը նշանակվում և վճարվում է ընթացիկ տարվա հունվար ամսից:

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունը և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունն իրականացնում են իրենց համակարգի Հայրենական մեծ պատերազմի մասնակից կենսաթոշակառու վետերանների հաշվառում:

***(3-րդ կետը փոփ. 15.05.08 N 448-Ն)***

4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարությունն ու Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունը սահմանված կարգով հաշվառված Հայրենական մեծ պատերազմի վետերանների թվի և պատվովճարի գումարի վճարման համար անհրաժեշտ ամսական ընդհանուր գումարի վերաբերյալ ցուցակներն ուղարկում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայություն:

***(4-րդ կետը փոփ. 15.05.08 N 448-Ն)***

5. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական

ծառայությունը ստացված ցուցակների տվյալներն ամփոփում է ըստ բնակության վայրերի և ուղարկում Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն: Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը միաժամանակ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կենտրոնական գանձապետարան է ներկայացնում հայտ ընթացիկ ամսվա գումարների տրամադրման համար:

***(5-րդ կետը փոփ. 15.05.08 N 448-Ն)***

6. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը նշված գումարներն ստանալուց հետո ապահովում է յուրաքանչյուր ամիս պատվովճարների վճարումը կենսաթոշակների վճարման համար սահմանված ժամկետներում:

***(6-րդ կետը փոփ. 15.05.08 N 448-Ն)***

7. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն է ներկայացնում ըստ ցուցակների յուրաքանչյուր ամսվա վճարումների, պարտքերի և չվճարված գումարների մասին տեղեկանք:

***(7-րդ կետը փոփ. 15.05.08 N 448-Ն)***